









<p>Միջնորդավճարների գծով եկամուտ  <b>Հանձնարողներին մատուցվող տարբեր ծառայություններից խումբը ստանում է միջնորդավճարների գծով եկամուտ: Միջնորդավճարների գծով եկամուտը կարող է բաժանվել հետևյալ երկու խմբերի:</b>  <b>► միջնորդավճարների գծով եկամուտ, որը ստացվում է որոշակի ժամանակահատվածում մատուցվող ծառայություններից,</b>  <b>Միջնորդավճարների գծով եկամուտը, որը ստացվում է որոշակի ժամանակահատվածում մատուցվող ծառայություններից, հաշվեզրվում է այդ ժամանակահատվածի ընթացքում: Նման հողվածները ներառում են միջնորդավճարների գծով եկամուտը ակտիվների կառավարման, պահատության և կառավարման ու խորհրդատվական այլ ծառայությունների համար: Վարկերի տրամադրման գծով կայտառվորության դիմաց միջնորդավճարները, թեթև վարկի օգուտգործման հավանականությունը բարձր է. և վարկերի հետ կապված այլ միջնորդավճարները վերագրվում են ապագա ժամանակաշրջաններին (վարկերի տրամադրման հետ կապված այլ ծախսումների հետ միասին) և ճանաչվում են որպես վարկի արդյունավետ տոկոսարդույքի ճշգրտում:</b>  <b>► միջնորդավճարների գծով եկամուտ՝ միջնորդային ծառայությունների գծով երրորդ անձի անուանից գործարքի բանակցություններն անցկացնելու և մատակցելու համար (օրինակ՝ բաժնետոմսերի կամ այլ արժեթղթերի առջի, կամ ընկերության առջ ու վաճառքի համաձայնագրի (վկրումը) ստացված կոմիսիոն վճարները ճանաչվում են այդ գործարքի ավարտից հետո: Կոմիսիոն վճարները կամ դրանց բաղկացուցիչ մասերը, որոնք կապված են որոշակի գործառնական ցուցանիշների հետ, ճանաչվում են համապատասխան ցուցանիշների բավարարումից հետո:</b></p>
<p>Շահաբաժիններից եկամուտ          եկամուտը ճանաչվում է, երբ խմբի՝ վճար ստանալու իրավունքը հաստատված է:</p>
<p><b><u>Արտարժույթի վերահաշվարկ</u></b></p> <p>Համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ԳՅ դրամով, որը խմբի գործառնական ու հաշվետվությունների ներկայացման արժույթն է: Արտարժույթով կատարված գործարքները վերահաշվարկվում են գործառնական արժույթի՝ գործարքի օրվա միջին շուկայական փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվներն ու պարտավորությունները վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ կիրառելով հաշվետու ամսաթվի փոխարժեքը: Արտարժույթով արտահայտված գործարքների փոխարևումից առաջացած օգուտը և վնասը ճանաչվում է համախմբված ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության Արտարժույթային գործառնականություններից օգուտներ/(վնասներ)՝ արտարժույթի վերագնահատումն հողվածում: Ոչ դրամային հողվածների համար, որոնք ներկայացվում են արտարժույթով արտահայտված սկզբնական արժեքով, վերագնահատման ժամանակ կիրառվում է սկզբնական գործարքի ամսաթվի փոխարժեքը: Իրական արժեքով հաշվարկվող արտարժույթով արտահայտված ոչ դրամային հողվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով իրական արժեքի որոշման օրվա փոխարժեքը:          Գործարքի ամսաթվի դրությամբ պայմանագրային փոխարժեքի և ԿԲ փոխարժեքի տարբերությունը ներառվում է եկամտի կազմում՝ նվազեցված արտարժույթով կատարված գործարքի գծով ծախսերը: 2017 և 2016 թվականների դեկտեմբերի 31-ի դրությամբ ԿԲ-ի կողմից հայտարարված փոխարժեքը կազմում էր 1 ԱՄՆ դոլարի համար 484.1 և 483.94 ԳՅ դրամ, 1 Եվրոյի համար 580.1 և 512.2 ԳՅ դրամ համապատասխանաբար:</p>